**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի օգոստոսի 06-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի օգոստոսի 16-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 06.08.2024թ.**
**N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «16» օգոստոսի 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՖԼԵՇ ՍՊԸ-ն, ի դեմս լիազորված անձ Ս. Ներկարարյանի, որը գործում է ընկերության գլխավոր տնօրեն Ս. Բեգլարյանի կողմից 01 նոյեմբերի 2021թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 06.08.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***ՖԼԵՇ ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Ե. Կողբացու 30 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01808789 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 15100166690902 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Լիազորված անձ՝ Ս. Ներկարարյան |
| ________________ /ստորագրություն/ Կ.Տ. | ________________ /ստորագրություն/ Կ.Տ. |

**Հավելված N 1**
**« 16 » օգոստոսի 2024թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 06 » « 08 » 2024թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18-1» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132200/4 | Բենզին, ռեգուլյար | 4 631 000.00 | 4 631 000.00 | 14 596 400.00 | 14 596 400.00 | 14 596 400.00 | **14 596 400.00** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***ՖԼԵՇ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ե. Կողբացու 30
ՀՎՀՀ՝ 01808789
Հ/Հ՝ 15100166690902
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Լիազորված անձ՝ Ս. Ներկարարյան

/ստորագրություն/
Կ.Տ.